

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

**Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր** _____ **Ս.Վ.Առաքելյան**



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**Լուսինե Տիգրանի Հովհաննիսյանի «Պաշտպանի մասնակցությունը
ապացուցմանը առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ ԺԲ.00.04
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

- Հետազոտության շրջանակներում հեղինակը նպատակ է դրել բացահայտել առաջին ատյանի դատարանում ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության ընթացքում առաջացող խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված հստակ առաջարկներ: Այդ նպատակին հասնելու համար խնդիր է դրվել՝
- բացահայտել պաշտպանության իրավունքի տեղը և դերը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված սկզբունքների շրջանակում,
 - բացահայտել այն դատավարական առանձնահատկությունները, որոնցով օժտված է պաշտպանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի շրջանակում՝ անդրադառնալով ոչ միայն քրեադատավարական, այլև պաշտպանների նկատմամբ պարտադիր կիրառելիություն ունեցող էթիկական նորմերին,
 - ուսումնասիրել ապացուցման կառուցակարգի և պաշտպանին տրամադրվող դատավարական երաշխիքների հարաբերակցությունը,
 - ուսումնասիրել պաշտպանի մասնակցության առանձնահատկությունները նախնական, հիմնական և լրացուցիչ դատախոսմաներին,
 - ուսումնասիրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված ապացուցման գործընթացի սկզբունքորեն նոր կարգավորումները՝ առաջին

ատյանի դատարանում դատաքննության յուրաքանչյուր ենթափուլում և պաշտպանի մասնակցությունը դրանց,

- վեր հանել այն խնդրահարույց կարգավորումները, որոնք գործնականում խոչընդոտում են պաշտպանի արդյունավետ մասնակցությանը ապացուցմանը առաջին ատյանի դատարանում,
- առանձացնել առաջին ատյանի դատարանում ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության առնչությամբ օրենսդրական թերությունները՝ առաջարկելով դրանց վերացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ:

Շարադրվածը վկայում է Լ.Տ. Հովհաննիսյանի ընտրած թեմայի արդիականության և հրատապության մասին:

Միննույն ժամանակ, տվյալ հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար: Բացի դրանից, ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել իրավակիրառ պրակտիկայում և օրենսդրական փոփոխությունների հիմք հանդիսանալ:

Այդ համատեքստում հարկ է ընդգծել, որ հեղինակը բավականին հաջողված փորձ է կատարել մշակելու գիտական այնպիսի աշխատանք, որը կարելի է համարել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ՀՀ-ում առկա արժեքավոր համապարփակ հետազոտություններից մեկը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, դրանցում ընդգրկված 8 ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը և խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, իրավական հիմքը, տեսական հիմքը, փորձառնական հիմքը, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը,

տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների արժանահավատության աստիճանը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Առաջին գլխում՝ «Պաշտպանի գործունեության տեսական և իրավական հիմքերը քրեական դատավարությունում» վերտառությամբ՝ հեղինակը ներկայացնում է պաշտպանության իրավունքի հասկացությունը, դերը և նշանակությունը, պաշտպանի դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում, պաշտպանի անկախությունը և ինքնուրույնությունը՝ որպես արդյունավետ պաշտպանության իրականացման նախապայման:

Երկրորդ գլխում՝ «Ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության դատավարական հիմքերը» վերտառությամբ, ներկայացվում է ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության աստիճանը՝ որպես դատավարական ձևը կանխորոշող առանցքային գործոն, ապացուցման գործընթացի դատավարական կարգավորումը՝ որպես պաշտպանի ձեռք բերած ապացույցների թույլատրելիության ապահովման երաշխիք:

Երրորդ գլխում՝ «Պաշտպանի՝ առաջին ատյանի դատարանում ապացուցմանը մասնակցության քրեադատավարական հիմքերը և տակտիկական միջոցները» վերտառությամբ, քննարկվում է պաշտպանի մասնակցությունն ապացուցմանը՝ նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումների փուլերում:

Հիմնվելով կատարված հետազոտության վրա՝ հեղինակը նաև կատարում է մի շարք եզրակացություններ, որոնց շարքում հատկապես հարկ է առանձնացնել հետևյալները.

- Պաշտպանության իրավունքը մեղադրյալին վերապահված իրավունքների ցանկում առանցքային նշանակություն ունի: Ըստ էության՝ այն մեղադրյալի գործիքակազմում առկա հիմնական զենքն է՝ դիմակայելու հանրային իշխանության կողմից նախաձեռնվող և իրականացվող քրեական վարույթին, հետապնդմանը: Պաշտպանության իրավունքը կարևորվում է ոչ միայն և ոչ այնքան որպես հռչակագրային իրավունք, այլ որպես իրական մեխանիզմ՝ հնարավորություն տալով մեղադրյալին ակտիվ մասնակցություն ունենալ ապացուցման գործընթացին դատական քննության փուլում: Միաժամանակ, որ-

պեսզի անձը կարողանա իրապես իրացնել իր պաշտպանության իրավունքը, անհրաժեշտ է, որ հանրային իշխանությունը երաշխավորի մի քանի նախադրյալների համաժամանակյա առկայությունը:

- Թեպետ մինչդասական վարույթում պաշտպանության կողմը ամենևին էլ զրկված չէ ապացուցմանը մասնակցելու հնարավորությունից, սակայն մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքը և դրա վավերապայման կազմող՝ գործը լուծելու իրավասություն ունեցող անաչառ մարմնի՝ դատարանի ներկայությունը լրացուցիչ դատավարական երաշխիքներ են ստեղծում պաշտպանության կողմի համար:
- Ոչ պակաս կարևորություն ունի պաշտպանության կողմի՝ պարզաբանված մեղադրանք ունենալու իրավունքի իրացումը: Հակառակ պարագայում, անկախ գործընթացի մրցակցայնությունից, պաշտպանի մասնակցությունն ապացուցմանը դառնում է բովանդակազուրկ: Պարզաբանված մեղադրանք ունենալու իրավունքը նշանակում է, որ մեղադրյալին պարզաբանված է մեղադրանքի թե՛ իրավական, թե՛ փաստական կողմը, ոչ թե պարզապես վերընթերցման, այլ այնպիսի եղանակով, որը թույլ է տալիս վերջինիս իրեն հասկանալի կերպով ունենալ ամբողջական պատկերացում:
- Մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքի երաշխավորումից և պարզաբանված մեղադրանք ունենալու իրավունքից զատ ապացուցման գործընթացին արդյունավետ մասնակցություն ունենալու համար անհրաժեշտ է երաշխավորել, որ պաշտպանության կողմը պատշաճ դատավարական ընթացակարգով ծանոթացել է գործի նյութերին և հասանելիություն ունի դրա ողջ ծավալին:
- Պաշտպանը ՀՀ քրեական դատավարության համատեքստում չի կարող դիտարկվել բացառապես որպես մեղադրյալի ներկայացուցիչ՝ բացառելով դատավարական ինքնուրույնությունը: Պաշտպանը թեպետև վարույթին ներգրավվում է մեղադրյալի պաշտպանությունն իրականացնելու նպատակով, սակայն ամենևին պարտադիր չէ, որ պաշտպանի և մեղադրյալի տեսակետները պարտադիր համընկնեն: Այսպես՝ այն բոլոր դեպքերում, երբ մեղադրյա-

լը հակված է ոչ իրավաչափ եղանակով սեփական պաշտպանությունն իրականացնելու, պաշտպանը պետք է փորձի պարզաբանել նման գործունեության անթույլատրելիությունը: Ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կառուցվածքային վերլուծությունը ևս փաստում է, որ պաշտպանը օժտված է իրավունքների և պարտականությունների ինքնուրույն ծավալով, ինչը ևս մեկ ցուցիչ է վերջինիս դատավարական ինքնուրույնության:

- Պաշտպանը և մեղադրյալը կարող են ունենալ տարբեր դիրքորոշումներ քրեական վարույթի վերաբերյալ: Ճիշտ է նաև այն պնդումը, որ պաշտպանը քրեական վարույթում գործում է վստահորդի հանձնարարականի հիման վրա: Որպես նշված իրավիճակի լուծման եղանակ կարելի է առաջարկել, որ՝ եթե տարածայնությունը վերաբերում է այնպիսի սկզբունքային հարցի, ինչպիսին, օրինակ, մեղքը ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ հարցն է, ապա առաջնայնություն միանշանակ տրվում է մեղադրյալի դիրքորոշմանը: Այս դեպքում, եթե քննարկումների կամ բանակցությունների միջոցով տարակարծությունը հարթել չի ստացվում, պաշտպանը պետք է դադարեցնի պաշտպանության հետագա իրացումը՝ չվնասելով մեղադրյալի շահերին: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հնարավոր իրավիճակների բազմազանությունը, գործնականում հաճախ լինում են իրավիճակներ, երբ տարակարծությունը վերաբերում է ոչ էական, զուտ դատավարական կամ զուտ իրավական բնույթ ունեցող հարցերի: Օրինակ՝ որևէ իրավական փաստարկի ներկայացում միջնորդության շրջանակում: Այս դեպքում, եթե պաշտպանը վստահ է, որ փաստարկի ներկայացումը որևէ կերպ չի կարող վնասել մեղադրյալի շահերին, ապա կարող է առավելություն տրվել պաշտպանի դիրքորոշմանը՝ հաշվի առնելով մասնագիտական ազատության շրջանակը, ինչպես նաև մասնագիտական փորձառությունը:

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Հեղինակն աշխատանքի 85-րդ էջում առաջարկում է ՀՀ քր. դատ. օր-ի 311-րդ հոդվածը լրացնել դրա 1-ին մասի 7-րդ կետով՝ հետևյալ բովանդակու-

թյամբ. «1. Նախնական դատախոսումների ընթացքում սույն հոդվածով սահմանված հաջորդականությամբ դատարանը քննարկման առարկա է դարձնում (...) 7. Միջնորդության դեպքում՝ մեղադրանքի պարզաբանման հարցը»: Նշված առաջարկությունը հեղինակը հիմնավորում է նրանով, որ մեղադրանքի պարզաբանման կարևորագույն հարցի քննարկումն առաջին անգամ արդյունավետ կերպով հնարավոր է դառնում հենց նախնական դատախոսումների փուլում, քանի որ նախքան նախնական դատախոսումների փուլը՝ խոսքը գնում է ոչ թե քննարկման, այլ վարույթն իրականացնող մարմնի կողմից պաշտպանության կողմին մեղադրանքի առկայության մասին տեղեկացնելու մասին: Հեղինակի այս կարծիքի հետ դժվար է համաձայնել, քանի որ ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածը սահմանում է մեղադրանք ներկայացնելը, այլ ոչ թե տեղեկացնելը: Նշված հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

«4. Քննիչը, հավաստիանալով մեղադրյալի ինքնության մեջ, նրան է հանձնում քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը, պարզաբանում մեղադրանքի փաստական հիմքը և իրավական գնահատականը, պարզաբանում է սույն օրենսգրքի 43-րդ հոդվածով նախատեսված մեղադրյալի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև մեղադրյալին հանձնում է դրանց ցանկը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված գործողությունների կատարումը հաստատվում է քննիչի կողմից կազմված արձանագրությամբ, որն ստորագրում են քննիչը, մեղադրյալը և մասնակցող այլ անձինք»:

Այսինքն՝ մեղադրանքը պարզաբանվում է, բացատրվում է դրա փաստական հիմքը և իրավական գնահատականը, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, իսկ թերի բացատրված կամ չբացատրված լինելու դեպքում պաշտպանության կողմը կարող է չստորագրել այն հենց այդ պատճառաբանությամբ: Այլ կերպ ասած՝ նկարագրված իրավիճակում կիրառելի պետք է համարել ոչ թե պարզաբանման, այլ քրեադավարական բողոքարկման կառուցակարգը:

2. Աշխատանքի էջերում (102-103, 105) հեղինակը նշում է՝ նախնական դատալսումների փուլում պաշտպանության կողմը զրկված է իր կողմից ապացույցներ ներկայացնելու օրենսդրորեն ուղղակիորեն ամրագրված հնարավորությունից: Այդ իրավունքը կարող է իրացվել միայն արդեն իսկ ներկայացված ապացույցների հետազոտումից հետո՝ դատաքննության լրացման փուլում: Հետևաբար՝ եթե, օրինակ, պաշտպանը ներգրավված չի եղել քրեական վարույթին մինչդատական վարույթում և ստանձնել է մեղադրյալի շահերի պաշտպանությունը արդեն դատարանում, կամ առաջացել է սուր անհրաժեշտություն ապացույցն անմիջապես դատարանին ներկայացնելու, պաշտպանության կողմը զրկված է նման հնարավորությունից այնքան ժամանակ, քանի դեռ չի սկսվել դատաքննության լրացման փուլը:

Թեպետ որպես հակափաստարկ կարելի է պնդել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածը հնարավորություն է նախատեսում քննարկել այլ վերաբերելի հարցերի շրջանակում, այլ իր անկյունաքարային նշանակությունը հաշվի առնելով՝ այն ենթակա է առանձին և ուղղակի օրենսդրական ամրապնդման: Ավելին՝ հիմք ընդունելով օրենսդրական տեխնիկայի կանոնները՝ ակնհայտ է, որ այն բոլոր դեպքերում, երբ օրենսդիրը նպատակ է ունեցել կարգավորել ապացույցներին կամ ապացուցմանը վերաբերող իրավահարաբերություն, ապա ուղղակիորեն մատնանշել է դա: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նույն՝ 311-րդ հոդված 1-ին 7-րդ և 8-րդ կետերով ուղղակիորեն անդրադառնում է ապացույցներին, իսկ նոր ապացույցների ներկայացման դրույթ ամրագրված չէ:

Հետևաբար, ըստ հեղինակի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասը ենթակա է լրացման 8-րդ կետով հետևյալ խմբագրությամբ՝ «1. Նախնական դատալսումների ընթացքում սույն հոդվածով սահմանված հաջորդականությամբ դատարանը քննարկման առարկա է դարձնում՝ (...) 8. Միջնորդության դեպքում նոր ապացույցներ ներկայացնելու հարցը»: Տվյալ մոտեցմանը դժվար է համաձայնել, քանի որ ՀՀ քր. դատ. օր.-ի 319-րդ հոդվածը, որը սահմանում է հետազոտման ենթակա ապացույցների ծավալի

հարցի քննարկումը, կողմերին, այդ թվում՝ պաշտպանության կողմին, իրավունք է վերապահում լրացնել հետազոտման ենթակա ապացույցների ծավալը նախնական դատախոսումների փուլում: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 319-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Հետազոտման ենթակա ապացույցների ծավալը կարող է լրացվել սույն օրենսգրքի 334-րդ հոդվածով սահմանված կարգով»: ՀՀ քր. դատ. օր-ի 334-րդ հոդվածի 2-րդ մասը հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելու կապակցությամբ սահմանում է՝ «Հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելու միջնորդություն հարուցելու դեպքում կողմը հիմնավորում է, թե լրացուցիչ ինչ ապացույց պետք է հետազոտվի՝ ինչ փաստական հանգամանք հաստատելու կամ հերքելու համար»: Ուստի՝ 311-րդ հոդվածում առաջարկվող լրացումը կատարելու անհրաժեշտությունը չկա, քանի որ այն արդեն իսկ նախատեսված է վերը նշված հոդվածներով:

3. Աշխատանքի 3-րդ գլխի 1-ին պարագրաֆի շրջանակներում քննարկելով այն իրավիճակները, երբ ապացույցն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանության կողմի ներկայացրած միջնորդությունները տարբեր քրեական գործերով, մի դեպքում, դատարանի կողմից մերժվում են, իսկ մյուսում՝ հետաձգվում՝ հեղինակը գտնում է, որ ներկայացված միջնորդությունների լուծման հետաձգումը հակասում է դատավարության փուլային բաժանման այն տրամաբանությանը, որ նախատեսվել է օրենսդրի կողմից: Ըստ նրա, նախնական դատախոսումների ներկայացված միջնորդության լուծումը, օրինակ, հիմնական դատախոսումների փուլում, խաթարում է հենց այդ տրամաբանությունը և ներկայացված միջնորդությունները պետք է բավարարվեն կամ մերժվեն, բայց ոչ հետաձգվեն: Միաժամանակ, հեղինակը հարց է տալիս՝ արդյոք տվյալ առաջարկը չի հակասում ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներին, որոնք ամրագրում են, որ միջնորդության լուծումը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կարող է հետաձգվել մինչև միջնորդության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար էական հանգամանքների պարզումը (աշխատանքի էջ 101): Նրա կարծիքով, նման հակասությունը բացակայում է, քանի որ ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի 4-րդ մասը թույլ է

տալիս հետաձգել միջնորդության լուծումը միայն այն դեպքում, երբ վերջնական որոշում կայացնելու համար անհրաժեշտ է պարզել էական հանգամանքներ: Մինչդեռ նախնական դատալսումների փուլում, երբ վիճարկվում է ապացույցի թույլատրելիությունը, լուծման համար անհրաժեշտ հանգամանքները արդեն իսկ պարզ են և՛ դատարանին, և՛ կողմերին: Հետևաբար, ըստ հեղինակի՝ ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի 4-րդ մասը ենթակա լրացման հետևյալ ձևակերպմամբ՝ «Միջնորդության լուծումը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կարող է հետաձգվել մինչև միջնորդության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար էական հանգամանքների պարզումը, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»: Միաժամանակ, առաջարկվում է ՀՀ քր. դատ. օր-ի 311-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հարցի կապակցությամբ կողմի միջնորդության լուծումը հետաձգման ենթակա չէ»:

Այս առումով ևս դժվար է համակարծիք լինել հեղինակի հետ: Բանն այն է, որ տարբերում են ապացույցը անթույլատրելի ճանաչելու ձևական (ՀՀ քր. դատ. օր-ի 97-րդ հոդվածի 3-րդ մաս) և նյութական (նույն հոդվածի 4-րդ մաս) խախտումներ: Օրինակ՝ քննչական գործողության կատարման իրավասության խախտումը ձևական, իսկ հարցաքննության ժամանակ խոշտանգումը՝ նյութական խախտում է: Առաջին դեպքում ապացույցը ենթակա է անթույլատրելի ճանաչման նախնական դատալսումների փուլում, իսկ երկրորդում՝ դրա բովանդակային հետազոտման ընթացքում՝ հիմնական դատալսումների փուլում: Այսինքն՝ վերջինիս պարագայում այն կարող է հետաձգվել մինչև դրա համար էական հանգամանքների պարզումը: Այդ իսկ պատճառով օրենսդրական վերը նշված փոփոխությունների անհրաժեշտությունը, թերևս, բացակայում է:

Այդուհանդերձ, ներկայացված նկատառումները չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հե-

տազուտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրապարակած հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:



Հետևաբար, քննարկվող ատենախոսական հետազոտությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, հետաքրքիր, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Լուսինե Տիգրանի Հովհաննիսյանի՝ «Պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը առաջին ատյանի դատարանում» ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանի շնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.04 «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, վարչական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել է Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդում և արժանացել դրական եզրակացության:

« 11 » փետրվարի 2026թ.

**Արդարադատության ակադեմիայի
գիտահետազոտական և ծրագրամեթոդական
աշխատանքների կազմակերպման բաժնի
գլխավոր մասնագետ**

Ա.Բայադյան